

մինչ էր ի Զմիւռնիս՝ զերբ առ նա գալ առ ինքն զի տօն մեծի Զատիկին ի միասին արասցուք. և միշտ յապասելն ճանապարհի նորա ո՛հ Մատթէոս հառաչելով և որդւոյն կտակ առնելով՝ յանձն արար զհոգի իւր ի ձեռն հրէշտակին մարդասէր ինտամցն. իսկ յետ ութ աւուրց ապա եկեալ էհաս Մատթէոս Զէլէպի յԱղարիանու պոլիս՝ անգիտացեալ զմահուանէ հօրն իւրոյ: Ուստի յայսմ ժամանակի եպիսկոպոս, վարդապետ, քահանայք, և տանուտետք եկեալ միւր թարութիւն մատուցին նմա ըստ արժանւոյն: Եւ Աստուծոյ գրող նախկին պատմութեան (ընդ գծումը մերն է) զանուն իւր յայտնէ՝ զոչ յերմիսս իրբն զերեմիա մարգարէ պատմող զորով ինքնան այսպիսի անցից անցելոց, որպէս վիպեալ էր երբեմիա մարգարէ պատմելի ինն զրով զանցս Ս. Երուսաղէմի ի բարեկրնական բռնութեան:

Ուստի յորժամ լուաւ ի փիլիպուպոլիս ժողովուրդք զամենեցոց, թէ եկեալ է Մատթէոս Զէլէպի յԱղարիանուպոլիս, զիր միթաբարութեան յղեցին առ նա վայելուչ պատուասիրութեամբ, եթէ քահանայք և եթէ զվիւտոր տանուտետք ի ձեռն պատշաճաւոր անձին՝ պատմաբանելով նմա զերախտիս հօրն իւր և սակաւ ինչ դրամ յառաջադրել յղեն. և զբովանակ ծախսն հաւուցանել խոտանալն. և ի ցուցանելն զհաշուագիրն թէ զնացեալ է ի պէտս եկեղեցւոյ շինութեան հազար վից հարիւր երեսուն և վեց մանչիւ (1636 մանչիւ կամ զորով) ինքն Մատթէոս Զէլէպին վասն այսր պատճառի զհօրն արարեալ կտակն ամբողջապէս հատոյց եկելոց՝ զզոյն հարազատ որդւոյ և նման հօրն իւրոյ հաստատելով: Ապա յորժամ հասին ի փիլիպուպոլիս այսոթիկ երեւելի անձինք բազում շնորհակալութեամբ զպարոն Մատթէոս Զէլէպոյն բոլորքն եւս կարի շնորհակալ լեալ՝ զազօթս, պաղատանս առ Աստուած մատուցին և դարձեալ զգիր շնորհակալութեան յղեցին առ Մատթէոս Զէլէպին պատմելով անդ զքնա անցս անցելոց ընդ անձինս իւրեանց և ի վախճանի եկեալ ի փիլիպուպոլիս՝ զոչ զտանելն իւրեանց զժամանակիս և զտաքսման պատճառ սոյն եկեղեցւոյս՝ զԱբրահամ Զէլէպի զհայրն իւր. և զի ի միջի իւրեանց զքառասուն և ութ մանչիւ ընդ հարիւրի ժողովելն վասն նորոգման. և այն անբաւական զոչ տեսնելով՝ ի մտաբերելն յանձնիս ի յեռամատարն եկեղեցւոյ Ամնաստուրբ Աստուածածնի և միշտ անարատ կուսի:

Որ արդ համառօտեալ ի գիրութիւն իմաց-

ման հասարակօրէն յԱղարիանուպոլիս Մեսրոպ եպիսկոպոսէ ի թիւ հայոց հազար երկու հարիւր եօթանասուն և եօթն (1277=1828) և ի յունիսի վելատսնեբորդն (16) ի փիլիպուպոլիս:

Իսկ արդ՝ վերստին առօրինակեալ այս ի նոյն օրինակէ անտի ի Պետրոս Դարէս Տէրայ Ատեփանեան ընկի Աղարիանուպոլսեցւոյ ի թիւ Հայոց՝ ՌՄՀէին (1828):

Աշխարհագրական և ուրիշ ինչ ինչ սխալները համառօտագիր Մեսրոպ եպիսկոպոսի կը վերաբերին. — Կամենեցէն Սպիտակ ծով և Մեջերկրական երթալ անկարելի էր... ոչ թէ փախչել այլ ճամբորդելն անգամ:

Ծ. ՔԻՒՐՏԵԱՆ

ԴԻՏՈՂ ՈՒԹԻՒՆՆԵՐ

« ՀԱՅԵՐԷՆԻ ՆՈՐ ԲԱՌԵՐ » ՈՒՆ՝

(Շար. տես Բազմ. 1927 էջ 179)

ԼԹ. — Գազաղիւ (էջ 49).

« Գազաղիւ »ը զայրանալ մեկնած է: Բայց կարծեմ եթէ ըսվի հնչյուն բառն ալ մեկնած ըլլար՝ իմաստն աւելի որոշ պիտի գտնէր: « Գազաղիւ » ուրեմն, առանձին չէ որ բարկանալ, նեղորտիլ կը նշանակէ, այլ հնչյւն հետ Հնչ, կամ հռնապ, յգ. հաւածիպ արբ. յոճը ըսել է: Ուստի « գազաղիւ » ընդ հնչյունն, համազօր կը զբռնեմ հայկական « զյօնս պոստի » ոճին, այսինքն՝ յօնքերն ամփոփել, ընդունելը ժողովելով՝ լուրջ ու խիստ կերպարանք մ'առնուլ, Հմմ. Առնեմ բոգը. « պատեմ »:

Խ. — Գուն (էջ 50).

Ասոր արմատն ալ պարսկերէնի մէջ կը փնտռէ. բայց ի զուր: « Գնար »ը « Գնար » զրոգը, (տ. Աճառ. 41), շատ լաւ կրնար « քուն »ն ալ « գուն » զրել: Բառն, ուրեմն, քուն է: « Հնծիւր, որդեակ... ինչի՞ գունն », ըսել է « Հնծիւր, տղաս... ինչ կը քնա ».

1. Հր. Աճառն. Տպ. Վենետիկ Ա. Վ. 1913. Բ. Վ. 1926.

հաս: Տգէտի մը սխալը մեզի նորութիւն չառնենք:

ԽԱ. — Դերի, (իմա դերէն էջ 51).

Յատուկ անուն մ'է գործ թովմա Արծրունի կը կոչէ «Դերանիկ»: Թէ՛ սա, թէ Շապուհ Բագրատունի զայս կը թարգմանեն «Ուխտիւք խնդրեալ ի հետնէ», «Որդի վանաց»: Պ. Աճառեան ուրիշներուն հետ կը կարծէ թէ զաւանական դերի բառէն առաջ կու գայ, որով կը թարգմանէ «խաղով ու պարով հանդէս» են: Այս նշանակութիւնը յատուկ անուն մը համար՝ շատ անյարմար կը թուի: — Տեր կամ Դեր (Հայ. տ=դ) արաբերէն վանք, եկեղեցի կը նշանակէ, ուստի, Դերեան կամ Դերանիկ, շատ վայելուչ կերպով կրնայ «որդի վանաց» թարգմանուիլ: — Հայկազեանի մեկնութիւնն ալ, (իբր տէրտեհի կամ անդրանիկ բառից համատուտ ձև), զիւրաւ արհամարհելի չէ, որովհետեւ Դերանիկի և Անդրանիկի նմանութիւնը յայտնի է: — Քանի որ Շ. Բագրատ. Դերեան կը կոչէ, կարելի էր նաև ըսել որ *Terenitus* լա. անունն համատուտութիւնն ըլլայ. սակայն սոյն պարագային՝ երկու մատենագրաց ստուգաբանութիւնը սխալ կ'ելլէ. որով՝ միակ պարզը կը մնայ մեր վերև տուած բացատրութիւնը:

ԽԲ. — Յետին (էջ 62).

«Առեալ գրեաց գլետին իւր», Այս բառով կ'ուզէ հասկնալ «կտակ». բայց գլետինին մէջ լուեւայն կ'իմացուի «իւր բան» «իւր գիր» բացատրութիւնը: Որով յետին միշտ յետին՝ վերջին ըսել է:

ԽԳ. — Անդրկական (էջ 76).

Այս բառին տեղ ընտրեալագոյն ձեռագիրները և աւելի խնամքով եղած տպագրութիւնք, կը գրեն «գոգական», Հմմ. Ժամանակագրութիւն, տպ. վենետիկ, 1898, Յաւելուած, են: Որով անկրկական ալ բացատրելու հարկ մը չի մնար:

ԽԴ. — Կիտոնտ (էջ 109).

Պ. Աճառ. ուրիշներուն հետ, ասիկա կը կարծէ *Koutonitis* (= սենեկապան) բառին համատուտ ձև: Սակայն այդ իմաստը հոս բոլորովին անյարմար է: «Կիտոնտ, կամ ինչպէս որիշ տեղ կը գրէ «Կիտոն» Մա. գիտորոս և դուկ տիտղոսներուն համագործ և հումանիշ է: Յառաջ կու գայ Եւրոպական Guidone, guida, guidare բայէն, որ հաւասարապէս առաջնորդ, զօրավար, իշխան կը նշանակէ: Այսպէս իտ. հին հեղինակ մը կը գրէ. «Ciechi guidoni di ciechi», և որիշ մը «Ed egli qual GUIDON (= Կիտոն) da gregge», ևն: Հետփառար, «Գրիգորի մագիստրոսի կիտոնի» և դուկին վասպուրականի և Տարսնի, կը թարգմանուի. «Գրիգոր մագիստրոս վասպուրականի և Տարսնի իշխան, (առաջնորդ, զօրավար) և դուքս»: Մինչ, եթէ Աճառեանի և այլոց ըսածը ճիշտ ըլլար, պէտք էինք թարգմանիլ. «Գրիգ. մագիստ. վասպուրականի և Տարսնի Սենեկապան և դուքս», որ անյարմար է: Տուած ստուգաբանութիւն՝ Մա. գիտորոսի ոճին ալ շատ համաձայն է. կը սիրէ միշտ հումանիշները խոնդել: Հոս ալ ուզած է երեք բառով միևնոյն տիպոսը նշանակել:

ԽԵ. — Վերնկալցիս (էջ 123).

Ահաւասիկ նոր բառ մ'ալ, գոր կը կարծէ թէ վերնկալցի բայէ մը յառաջ կու գայ: Ասոր մէջ երկու սխալ ունի Պ. Աճառեան. բառը Լամբրոնացոյն կարծելով, և անոր այնքան պարզ ծագումն անգիտանալով: Լամբրոնացոյն չէ այդ բառը՝ այլ խորհրդատետր պատարագամատոյցին, որուն նկատմամբ կը գրէր ինքին Լամբրոնացի՝ «Մերս խորհրդածութիւն պատարագին նախ թարգմանեցաւ քան զհաստատելն յեկեղեցի սրբոյն Յովհաննոս Սպկերերանի աւանդութեանցն»... այսինքն՝ մեր պատա-

1. Ն. Լամբրոնացի, Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ և Մեկնութեան Պատարագի, Վենետիկ. 1847, էջ 188.

բազմատոյցը իրմէ (Ղամբը-էն) 600-700 տարի առաջ կար արդէն:

Իսկ «վերընկայցի»-ը, ո՛չ եթէ «վերընկայցի» յառաջ կու գայ, այլ՝ վերընկայցի մանկանոն բայէն, որուն արմատը՝ կտր.ի հրմ.ի ապա.ի և սնց. դերքայի մէջ՝ - կը փոխուի և ընկալի՝ կ'ըլլայ: Իւստի. վերընկայցի, Ապա. կ'ըլլայ, վերընկայցի, «վերընկալցի», - կայցի կէն: Եթէ երբեք վերընկայցի բայէն յառաջ գար, ապա.ին ոչ թէ վերընկայցի, այլ վերընկայցիս պիտի ըլլար. ինչպէս Բ. Օրբ.նայ, ԳԼ ԼԲ, 2, կը գրէ «Ալկայցիս»: Արդ, թէ՛ն վերընկայցի բայ մը կրնայ գոյութիւն ունենալ, սակայն ներկայ պարագայի մէջ՝ ամենևին տեղի չունի՝:

114-136 էջերուն մէջ «ՆՈՐ» կոչուելու արժանաւոր բառ մը չեմ գտներ. սովորական բարդութիւններ են: Միայն 133-136 էջերուն մէջ Հիգինակին կատարած, սրբագրութեանց նկատմամբ կ'ուզէի մէկ քանի դիտողութիւններ ընել:

ԽԶ. — Տար (էջ 135).

Կ'ըսէ «ուղղէ օտար»: Բայց տար՝ արդէն օտար կը նշանակէ հայերէն: Տ. ՆՀԲ. Առձեռն են:

ԽԷ. Աստուծաւան (էջ 135).

Կ'ըսէ «պէտք է կարգաւ աստուածային»: Ես կարծեմ թէ աւելի ճիշտ է «Աստուածասնդ հրամանաւ» սրբագրելն:

ԽԸ. Իջուան չտսն (էջ 161).

Գովելի քահանայի մը վրայ է խօսքը, ուր կանոնը կը ցուցնէ թէ ինչպէս պէտք է ժողովուրդը զայն յարգէ, և կը գրէ. Իբրև զհայր տեսանին... պահեն ի չարէ...

Իջուան Զտան... պտուղ տան... օգնեն, զմատաղենիս տան» են: Այս ամբողջ պարագաները կը ցուցնեն, թէ՛ բարոյ պէտք է ըլլայ իշտան տան և ոչ Զտան. վերջինս սխալագրութիւն մ'է: Պ. Աճառ. խնդիրը չի լուծեր և կ'ուզէ ասկից նոր ոճ մը հանել «ի ջուան տայ» կարդալով: Մեզ բոլորովին անհաւանական է այդ տեսութիւնը:

Նոյնպէս նորութիւն մը չեմ գտներ 155-70 էջերու մէջ նշանակուած բառերու մէջ. մեծ մասամբ սովորական բառեր են:

ԽԹ. — Դիւսափոխելն (էջ 159-60).

Տրուած մեկնութիւնը լաւ է, և Միս. Գոշի յետին դարուց ձեռագրաց մտքին համաձայն. հմմ. ձեռգր. Գ, 2, է, Ը և Ժ: Այս բառը Հայկազեանի մէջ չկայ. անոր համար մեծապէս կը սխալի Պ. Աճառեան նոյն բառգիրքը մեղադրելով: Հայկազեան «Դիւսափոխիմ» բառը միայն ունի, որը կը մեկնէ «այսանարի»: Աճառեան այս մեկնութիւնը կը կոչէ «անյարմար և անտեղի»: Սակայն մեծապէս կը սխալի: Դիւսափոխիմ կազմուած է դև և փոխիմ բառերէ, որ հայերէն տարբեր կերպով կ'ըսուին «այս» և «հարկանեմ» = (հարեմ): Արդ «դիւսափոխիմ» «այսանարեմ» էն զատ ուրիշ ի՞նչ բան կրնայ նշանակել: Պ. Աճառ. կրնայ մեղադրել բառագիրքը՝ սխալ մէջբերում ընելուն, բայց ուրիշ ոչ ինչ: Արդէն մեր կանոնագրոց 1177 և 451 թիւերը կը գրեն «դիւսափոխիցի», այլը՝ «դիւսափոխիցի». իսկ Միս. Գոշի բնագիրն ու հնագոյն և ընտրելաւորն ձեռագիրքը, «դիւսափոխի» կ'ըսեն. ընդհակառակն մեր ԺԳ դարու կանոնագիրքը՝ չունի այդ բառը: Սակայն պէտք

1. Հոս ալ նոյն մեկնութիւնը կը կատարուի ինչ որ տեսանց վերանգրեցմի նկատմամբ. (Բզմ. ապրիլ. էջ 105) Յաւելուածոյ բայի կան որ բարդուելով ուրիշ մասնակներու կամ բառերու հետ, կը կորսնցնեն պարզ արմատին, կը զարդն յաւելուածոյ ըլլալէ և իբր Բ. Լեորդութեան կանոնաւոր բայ կը խոնարհին կրու կամ ներք. Այսպէս տեսանեմ, պարզեմ բայերը մաս-

նակներու կամ բառերու հետ միասնով կ'ըլլան անտես. սեմ, երկրպագեմ, և ասոց կատարեալն ալ ոչ թէ ան. տեսի երկրպագի կ'ըլլայ, այլ անտեսեցի, երկրպագեցի: Նոյնպէս վերանգրել կազմուած է վեր և անկանել կամ անգամել = հիւսել բառերէ. որուն կատարեալը՝ կրու արական մեծով, կ'ըլլայ վերանգրեցայ, են. վերանգրեցան:

է գիտնալ նաև որ այդ ձեռագիրները՝ Հայկազեանի հրատարակուելէն շատ վերջը եկած են մեր վանքը:

Ծ. Զրեւ (էջ 160).

Մի՛ գրեթ զուխտ քո. շատ ընտանի է բացատրութիւնը «մի՛ Յրեթ զուխտ քո». որով մի՛ գրեթ սխալագրութիւն է պարզագէտ և պէտք չէ սզիտաց սխալները մեզ օրէնք ընենք:

Հոս կ'ընդօրինակէ Գր. Մագիստրոսի տառաւոր մը, «որուն իւրաքանչիւր բառը՝ մի մի հանելուկ» կը կոչէ: Եւ իրաւամբ. որովհետև զրութիւնը աւելի արարերէն է է քան հայերէն: Տեսնենք ուրեմն այդ հանելուկները:

«Բառուսակ բազմապատկան բազմազանգալ բարդաւճեալ Բարառաբար բախտեական ներքուն բայի շարժմանու, Բարեհամ բուժող հլու բարբոկ զեղայ ձեզ ընծանուլ. Բեզեկ բազմակ բեզուն բակաղթթի. քեզ նուիրեալ: Ներուն նաժակ նիտան նորին նացոր անբուժական, Նաբարան նուէր նիտան նմին նեախ անգաւական, Ներուն նպատա նաշան նեոին նարի կիզողական, Ներուն նաթ աննուկին նայան նմին իւր պահողան»:

ԾԱ. — Բառուական.

Պ. Աճառ. զայս «անծանօթ» կը կոչէ: Զուտ արարերէն է և կը նշանակէ դաշտային, անապատե առնուած: Յառաջ կու գայ պէտա արք. բառէն — դաշտ, անապատ. միացած է հայ ական մասնիկին հետ:

ԾԲ. — Բաղդատական.

Աս բառը չէ նշանակած. Հայերէն բաղդատել բայէն յառաջ չի գար, այլ՝ արք. Պարտաւան — (Բարեւոն) քաղաքին տառադարձութիւն է, տիտե ածանցով. որով բաղդատական կը նշանակէ քաղաքական. համ. հոռովական, վիեննական են:

ԾԳ. — Բաղազանգեակ.

Հայերէն է, իբր թէ ըսէր «ի զանազան (նիւթոց) բազկացեալ»:

ԾԴ. — Բարառաբար, Բախտական.

Երկուքն ալ հայերէն են, պարսկական պէր = (բար) և պա = (բա) նախադրութեամբ՝ որ Գործիական հոլովի իմաստն ալ կու տան: Ուստի, «բարառաբար» ըսել է ասեղնով, «քախտական»՝ յաւ մը խորհելով, աղէկ մտածելով:

ԾԵ. — Հլու.

Հլու արարերէն անոյշ ըսել է՝ բառին ամէն իմաստովը:

ԾԶ. — Բարշուկ.

Ասիկա ալ «անծանօթ թառ» կը համարի: Պարսկերէն նախադրութենէ (պէր = քար) և արարերէն շոգ = ջոգ = «չափ» բառէն կազմուած է և կը նշանակէ «չոյժ տեւ յայի»: Առ այս համ. տե՛կ. պէրքեմալ: Յառաջ կու գայ շագ կամ իշթագ բայէն, այսինքն՝ տեւլամ, ցանկամ, տարփամ — «Բեղեկ» իբր նոր գործածուեր է հոս:

ԾԷ. — Նիտան.

Այս բառին համար էլ 199 կ'ըսէ. «անստոյգ և թերևս անգոյ բառ»: Իսկ 175 էջին մէջ «նաւակ նիտան նորին» կ'ուզէ կարգալ «նամակն ի տան նորին». բայց այս ընթերցմամբ ինչ իմաստ կու տայ ասացուածին: Այդ ընթերցումն ալ արդէն սխալ է և բառը նիտան պէտք է մնալ. որովհետև ինչպէս ընթերցողը կը տեսնէ, Գր. Մագիստրոս հոս յատուկ ոճ մը բռնեւ է, այսինքն իւրացանչիւր տողին բոլոր բառերը՝ բաց ի վերջինէն, Ն գրով կը սկսին: Արդ, Պ. Աճառեանի առաջարկած ձևը հեղինակին գրելու կերպին հակառակ է, և հետևաբար մերժելի: Աս ալ արք. բառ է. Նիտանն ըսել է անուշահոտ իւղ մը, օծանելիք մը: Ըստ այսմ, Գր. Մագիստ. յայ տողը «Ներուն նամակ Նիտան, նորին նաքոր անբուժական» կարելի է թարգմանել. «Մէջը անուշահոտ նամակ մը կայ, որուն կորուստն անբուժելի է»:

ԾԼ. — Նաքոր, (էջ 199)։

Այս բառն ալ չէ հասկցած։ Նման բառ մը կայ արարերենի մէջ, Նագար, որ բանի մը կորուստ կը նշանակէ։ Սակայն արբ. բառը կորուստ նշանակելու համար, պէտք է ց տառով գրել։ Իսկ ց գրով՝ ուրանալ ըսելէ, որ տեղւոյս յարմար չէ։ Անշուշտ կամ օրինակողի մը սխալով, և կամ հեղինակին կարեւորութիւն չտալովն է որ փոխանակ զ՛ ք՛մ գրուած է, և այս ենթադրութեան ստուգութենէն միայն մեկնութիւնս կ'ըլլայ ուղիղ կամ ոչ։

ԾԹ. — Ներծուն (էջ 199)։

Աս ալ «անստոյգ բառ» է, կ'ըսէ։ Բայց շատ ևստոյգ և զուտ հայերէն է։ Զունեմ — ձօնեմ բայէն ուստի «եներձուն» ըսել է ձօնեալ։ Հեղինակը ներ մասնիկը յաճախ կը գործածէ բառից սկիզբը։

Կ. — Նաջան (էջ 198)։

Ես ալ Պ. Աճառեանի հետ անստոյգ եմ բառիս հանդէպ։ Սակայն յայտնի է որ Նեախն անական մ'է այս, և ինձ կը թուի պարսկերէն. կազմուած նա և ձան բառերէ, այսինքն՝ անհոգի, անշունչ, մեռեալ. այսուհանդերձ տողին իմաստն անորոշ կը մնայ։

ԿԱ. — Ներլուն։

Լի, լցեալ, լեցուն կը նշանակէ։

ԿԲ. — Աննակին։

Բառս կազմուած է հայ. ան բացասական մասնիկէն և Նակի՝ արք. = մարդը՝ սուրբ բառէն և և հայ. դիմորդէն։ Որով, անեակի՝ նար բառին անականն է, և կը նշանակէ անմարդը. — Ասոնք էին վերի տաճարաւորին դժուարագոյն բառերը, զորս կը յուսամ ըստ բաւականի որոշ կերպով լուսարանած ըլլալ։

ԿԳ. — Ատինել (էջ 177)։

Պ. Աճառեանի տուած մեկնութիւնը լաւ

է. բայց աւելի պարզ և ընտիր պիտի ըլլար, եթէ ըսէր, ատինելով յն. δύναι αδυνατέω = անկարող ըլլալ, անկարանամ բայէն յառաջ կու գայ, և անոր տառադարձութիւն մ'է։

ԿԴ. — Խարբ (էջ 187)։

«Անստոյգ բառ» կ'ըսէ։ Ոմանք զայս կարծած են յատուկ անուն. այլը՝ զարիպ բառին հետ նոյն, և Աճառեան՝ «խարք սուր, թուր գոյականէն յառաջացած» կը կարծէ, (տ. էջ 189)։ Այս կարծեցները բոլորն ալ բառին իրական նշանակութենէն շատ հեռի են։ Զուտ արարերէն բառ մ'է ասիկա. յառաջ կու գայ խարպ կամ խարբապ բայէն, և ըսել է ապահանջ, աւրել, փճանալ, — ցնէլ նիւթական և բարոյական բոլոր իմաստներով։ Ուստի խարբ (և ոչ խարք), Սեռ. խարքի, (հմմ. արար՝ Սեռ. արքի և ոչ արք, արքի ևն), կը նշանակէ ապականեալ, փճացած, չար։ Այսօր իսկ շատ տեղեր դոյն իմաստով կը գործածուի այդ բառը։ Զատխանեան բառգրքի մեկնութիւնը բաւական լաւ է, սակայն պէտք էր գրել թէ արք. բառ է։ Արդ Մագիսարոսի սա տողը, «Զիս համալուծ առնես որդւոյդ խեղկեալ խարքի», կարելի է թարգմանել. «Զիս քու չար՝ փճացած որդւոյդ հաւասար կ'ընես»։

ԿԵ. — Խոռ(ի) (էջ 190)։

Զայս ևս «անյայտ» կ'անուանէ։ Ինչո՞ւ. հայերէն շատ ծանօթ բառ մ'է այս, խռսեմ բայէն յառաջ կու գայ, և կը նշանակէ խոռչ, ինչպէս ձօնեմէն՝ ձօն։ Ուրով՝ «որպէս յեղջերդ խոռի խրեցեալ խափուցմամբ», ըսել է «ինչպէս եղջերի խոռոչին մէջ խրելով՝ ներս փակուած, ուղ. հուրովը խռս է, և ոչ խոռի»։

ԿԶ. — Հողմողումս (էջ 249)։

Կարծեմ աս ալ իրմէ նախընթաց բառին պէս (հառումս = խառնումս), խոդիողումս սրբագրելի է։

ԿԷ. — Տէռն (էջ 278).

Նախ զայս ևս «անծանօթ և անսոյզ բառ» կը կոչէ. «յետոյ՝ «թուի... նշանակէ պիղծ, անմաքուր», և հուսկ՝ ըստ տաւ տամսելով՝ կրնայ ըլլալ, կ'ըսէ, «Տեսան»։ Ասոր վրայ գրելն անգամ աւելորդ էր։ Այսպէս Տեսան բառն է, որուն պատիւը մոռցուած է, և ուրիշ ոչինչ։

ԿԸ. — Յմախիւղ (էջ 279).

Կ'ուզէր առ ալ Հայկազեանի մէջ մտած ըլլար. բայց արարերէն բառ է այս, Հայկազեանը հայերենի համար շինուած է։

ԿԹ. Քաղոց (էջ 281).

Քառիս նկատմամբ երկար տեսութիւններ կ'ընէ որ կրնան ճիշտ ըլլալ, սակայն մեր Քաղոց (Դեկտեմբեր) ամսոյն ծագումը, ինչպէս դիտուած է արդէն ուրիշներէ, հետեւեալն է, որովհետեւ արեւն այս ամսուան մէջ ի քաղն կը մտնէ։

Հ. — Օրսց (էջ 283).

«Թերեւս որայ բառն է, կ'ըսէ, հոմանիշ պարուզ բառին»։ Այո, որայ բառն է, բայց ո՛չ հոմանիշ պարուզին, այլ փոխաբերաբար՝ նմանութեամբ գործածուած, նշանակելու համար արդիւնքը, պարուզը։ Յովնանի վրայ է խօսքը, որուն քարուզութիւնը իր սերմ կը նկատուի, և նինչուէացուց դարձը, ապաշխարութիւնը իբրեւ հունձը, օրայ, և արդիւնք այն սերման։

Այս համեստ դիտողութիւնները վերջացնելու, կ'ուզեմ ըսել որ նպատակս եղած է միայն ցոյց տալ թէ «Հայերէն նոր բառեր»ու երկու հատորիկներուն մէջ նոր կոչուելու հազիւ 70-80 բառեր ընդ մնացածները կամ սովորական բարդութիւններ են, կամ օտարալեզու են՝ հայերէնի հետ բարդուած, կամ անհմուտ գրողի ու օրինակողի տգիտութեան արդիւնք, և հուսկ՝ կամ սխալ մեկնուած ու լուսաբանուած են։ Կը յուսամ թէ այսու նպատակով կ'ըլլամ գոնէ մասամբ, մեր մասնագործութեամբ զբաղողներու ձեռնարկին՝ լեզուական հարցին մէջ։

Հ. ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՊԱՏՄԱԿԱՆ ՇԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՔ

Ա. — Հայկական ճարտարապետութեան ուսումնասիրութիւնը, կարելի է առել, որ դարձել է օրուան հարցերից մէկը. որով ամէն ոք եթէ ցանկալ անոր բարեյայտող լուծումին, պարտի իւր հետազոտութիւնները, իւր գրչի լուծման արկանել նժարի այն թտալը, յորում ձեռնհասօրէն կը մրցին ի նպաստ հայութեան դատին, բանաբոլոր ճարտարապետ և մասնագէտներ, ինչպիսիք են Յ. Սարգիսովսկին և Թ. Թորամանեան։ Հարկ չկայ անպատճառ մասնագէտ լինել ճարտարապետական արուեստին քննական ասպարէզի վրայ, այլ հարկաւոր է ունենալ գեղարուեստին ըմբռնում, գիտող աչք, և համեմատական սրամտութիւն։ Աստի երբ

կը ճարձակինք հասարակութեան դատաստանին յանձնել մեր փասաքիմաց հետազոտութիւնները, անձնական տեսութիւնները, յաւակնութիւն չունինք հեղինակաւոր վճիռ մը արձակելու, այլ լոկ համեստ սիրողի անդրադարձութիւնք են, որ հայրենասիրական զգացումներէ յորդորուած, յոյս կը տածենք հրապարակի վրայ դնելով, ձեռնհասից և կարողազունից տալ պատճառ անգրագոյնս մտածելու և հասնելու աղբիւրներու խորը, յորմէ նախնական դարերէն կը բխի ինքնուրոյն և բնիկ հողի վրայ Հայկական կոչուած ճարտարապետութիւնը։

Եթէ Հին ուղիով գնացողներէն խոստրինք երբեմն մեր հետազոտութեանց ժամանակ,